ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕХЕГНУТИ ГЮХАПЕТАРАН

գ. Եղեգնուտ հեռ. ( 037) 6-90-94 093 18 76 56

Թիվ _ 114

«29 » Օգոստոսի 2012 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է Եղեգնուտի համայնքի ղեկավարի 24 հուլիսի 2012 թվականի N 11_Ա որոշման և 01 հուլիսի 2012 թվականի N 05_Ա կարգադրության «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համաձայնեցված տարբերակները:

Առդիր 2 թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

7625-12
«30» 08 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 - 56

# ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2012թվականի N 11_Ա

## ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16 – րդ հոդվածի 1 – ի մասով և «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32 – րդ հոդվածի 1 7 – րդ կետով որոշում եմ՝

1. 2012 թվականի սեպտեմբերի 9 –ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքում տեղամասային կենտրոն սահմանել՝

   1) Մանկապարտեզի շենքում, 1 – ին փողոց 11շենք հասցեում.
   2) Տարածքը տիրապետող՝ Ռոման Կարապետյան.

2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Եղեգնուտի համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

2012թ. հուլիսի 24

գ. Եղեգնուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Յեռ. (093) 18 – 76 - 56

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01. հուլիսի 2012թ N 05-Ա

## ՍԵԴՐԱԿ ՊԱՐԳԵՎԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՎՃԱՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 26 հոդվածի 1 – ի կետի «գ» ենթակետով, 31 հոդվածի 1 – ի մասի «բ» ենթակետով, հիմք ընդունելով ժամանակացույցը և իր դիմումը կարգադրում եմ՝

1. Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի Աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2 - 1) Սեդրակ Պարգևի Ալեքսանյանին տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ համաձայն ժամանակացույցի:
2. Իր պարտականությունները գերազանց կատարելու համար խրախուսել միանվագ դրամական պարգևատրությամբ՝ մեկ ամսվա իր աշխատավարձի չափով 117000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) դրամ :
3. Աշխատակազմի քարտուղարի բացակայության ժամանակ պարտականությունները վերապահել Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վերմիկ Սիմոնյանին:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

2012թ. հուլիսի 01.
գ. Եղեգնուտ